Արձանագրություն N 1

ԹՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-26/19 ծածկագրով գնման ընթացակարգի գնանշման հարցմամբ հանձնաժողովի առաջին նիստի

բ. Երևան 07.մայիսի 2026թ.

ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Դավթյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ջ. Հովհաննիսյան, Լ. Ալեքսանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Գևորգյան

1. *Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին*

Հանձնաժողովի նախագահ՝Ջ. Հովհաննիսյան

ա. Հաստատել գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստը.

բ. Հաստատել գնահատող հանձնաժողովի հաորդ նիստի անցկացման օրը և ժամը:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>> - ի /այսուհետև՝Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ա) Գնման ընթացակարգի հրավերի(ծանուցման) տեքստը հաստատելու մասին

Կարգի 26-րդ կետի 4-րդ ենթակետի և 31-րդ կետի պահանջներին համապատասխան ու հիմք ընդունելով 2026թ. մայիսի 1 -ին Պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված <<Ապրանքներ >>--ի գնման գործընթացին վերաբերվող գնման հայտը: Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի հատարարության և հրավերի տեքստերը, որոնք վերցված են տեղեկագրում հրապարակված օրինակելի ձևից: Գնման ընթացակարգի հատարարության և հրավերի օրինակելի ձևերում կատարվել են լրացումներ և փոփոխություններ, որոնք չեն հակասում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

բ) Հանձնաժողովի հաջորդ նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

Կարգի 26-րդ կետի 4-րդ ենթակետի և 31-րդ կետի պահանջներին համապատասխան գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հայտերի բացման նիստի օրը և ժամին: Հայտերի բացումը և հաջորդող գնահատումն իրականացվելու է թղթային եղանակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ ---------- Ն. Դավթյան

Անդամներ ---------- Ջ. Հովհաննիսյան

Անդամներ ---------- Լ. Ալեքսանյան

Քարտուղար ---------- Հ. Գևորգյան